№ 268 ՈՒՐԲԱԹ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 268

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE-S. LAZARE

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տ ե լ ե ֆ ո ն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ

(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը 10 ռուբ.	10 ամիսը 9 ռուբ.	9 ամիսը 8 ռուբ.	8 ամիսը 7 ռուբ.	7 և 6 ամիսը 6 ռուբ.	Այնուհետեւ ամսական ՄԷԿ ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սգացեալ Մկրտիչ քահանայ, Փեփրոնիա, Քրիստափոր և Ստեփան ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՆԵՐԸ յայտնում են խորին շնորհակալութիւն այն անձանց, որոնք պատւեցին իրանց սիրելի եղբայր

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

յիշատակը անձամբ, ցաւակցական գրութիւններով ու հեռագիրներով։

888. 1-1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Այսօր, ուրբաթ, հերթական երեկոյթը հանդիսաւոր պաշտամունք բազմերախտ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

յիշատակին։ Այսու յարգանօք հրաւիրվում են գրական գործիչները, հանգուցեալի յիշատակը յարգողները և Սալօնի մշտական այցելուները։

ՈՉ ՈՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՒԷՐ ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ։ Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։

13. 1—3

ԾՆՆԴԵԱՆ ԸՆԾԱՆԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունքին կից կազմված է Յանձնաժողով, որ պարտականութիւնն է հաւաքել ԸՆԾԱՆԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

ՈՒՂԱՐԿԷՔ ՔԻՍԱ-ՏՈՊՐԱԿՆԵՐ

ընծաներով։ Ցանկալի է՝ սապօն, ծխախոտ, գլանակ, թէյ, շաքար, սանր, թել, ծրարներ, թուղթ, մատիտ, չոր քաղցրեղէն, չորացրած մրգեղէն, տաք հագուստեղէն և այլն։

Բոլոր ընծաները անմիջապէս կուղարկվեն պատերազմական դիրքերը Քաղաքների Միութեան յատուկ լիազօրի միջոցով:

Ընծաները հասցէագրել Յանձնաժողովի հետեւեալ անդամներին.

1) Լ. Ն. ԼԵԲԵԴԻՆՍԿԱՅԱՅԻՆ (Օլգինսկայա փող. № 47, տել. 11—94)։
2) Գ. Ա. ՊԻՐԱՅԻՆ (Տատիանինսկայա փող. № 10, տել. 15—39)։
3) Ն. Ա. ԲՈՒՏԿԵՎԻՉԻՆ (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տել. 16—58)։
4) Ա. Ա. ՉԵՐՆՈՅԻՆ (Տեխնիչեսկայա փող. № 2, տել. 5—73)։
5) Լ. Ե. ԵՐՄՈԼԱԵՎԱՅԻՆ (Ջուբալովսկայա փող. № 13)։
6) Ե. Ա. ԲԻԼՕՅԻՆ (Բրոսսէ փող. № 3)։
7) Օ. Ս. ԲՈՒԿՇՏԵՅՆԻՆ (Օլգինսկայա փող. № 6, տել. 5—55)։

ԿԱՐԵԼԻ Է ՏԵԼԵՖՕՆՈՎ ԽՆԴՐԵԼ՝ ՄԱՐԴ ՈՒՂԱՐԿԵԼ ՏՈՊՐԱԿՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ.

Դատարկ քիսա-տոպրակներ կարելի է ստանալ Ն. Ա. Բուտկեվիչից (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տել. 16—58)։

Կարելի է ուղարկել եւ անուանական տոպրակներ։

Կարելի է ընծան դրամով ուղարկել, այն է՝ 1 ռուբլի, որով Յանձնաժողովը կը պատրաստէ լիքը տոպրակներ։

Համառուս. Քաղաք. Միութեան Կովկասեան Բաժանմունքի լիազօր՝ Ալ. ԽԱՏԻՍԵԱՆ
Յանձնաժողովի նախագահ՝ ԲՈՒԿՇՏԵՅՆ

տա. (օ. մ.) 860. 3—3

ԱԶԴ

Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսի հայ ազգաբնակութեան մեծ մասը Թիֆլիսի կլուբների բեմերի վրա հնարաւորութիւն չունեցաւ տեսնելու հայ դրամա-օպերէտային խմբի թատրոնական նոր գործ

ԱՍԻԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕՊԵՐԷՏՆԵՐԸ

ընկերութիւնը ընդառաջ է գնում նրանց ցանկութեանը և, վարձելով Ժողովրդական Տան մօտ - կամուրջին կից - նախկին ցիրկ, ներկայումս կինօ-թատրոն «ՌԵԿՈՐԴԻ» շէնքը

Հինգշաբթի, դեկտեմբերի 10-ից սկսում է իր օպերէտային ներկայացումները ուժեղացված անսամբլով և երաժշտախմբով։

Գները մատչելի (2 ռուբլուց մինչև 25 կոպէկ)։ Ներկայացման մասին կը յայտարարվի առանձին։

Խմբի լիազօրներ՝ պ. պ. Թ. ՊՐՈՍԵԱՆ, ՂԱԶԱՐԵԱՆ և ՓԻՐՈՒՄԵԱՆ։

882. 1—1

տա.

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ն
(Զուբալովի անուան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ
Խմբակցութիւնը
Այսօր, ուրբաթ,
Դեկտեմբերի 4-ին
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

Երկրորդ անգամ հայ բեմի վրա փոխադրութիւն Վիկտոր Հիւգոյի համանուն յայտնի վէպից

ԹՇՈՒԱՌՆԵՐ

(ԺԱՆ-ՎԱԼԺԱՆ)

Դրամա 5 գործ. 9 պատկերով, Թարգմ. Միք. Ստամբոլցեանի։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ. - օր. օր. Արմէն, Արփենի, Էմմա, Սիրանոյշ, տ. տ. Մարգարիտ, Ցամիկ, պ. պ. Ամօ-Խարազեան, Աղաբաբեան, Գալստեան, Գաւրօշ, Գօլանջեան, Եանիկեան, Մարութեան, Միքայէլեան, Յարութիւնեան II, Ռուսեան, Սերժ, Օհանեան, Օդաբաշեան և ուրիշներ։

Սկիզբն է երեկ. ժամը 8-ին։

Տեղերի գները 4 կ. մինչև 50 կ.
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ ՄԱՄՈՒԼԵԱՆ Վ. և ԳԱՒՐՕՇ

տա. 887. 1-1

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մօսկվայի համալսարանի և ասիստենտ Բերլինի համալսարան՝ ի պրոֆ. Զօնդէկի։ Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սոլոլակ, Րտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրշեհաշէջների բնակատեղի դիմացը, տելեֆոն 10—58.

տա. (չ. ու. կ.) 806. 50—12

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ԲԺԻՇԿ, ՖԵԼԴՇԵՐՆԵՐ, ՖԵԼԴՇԵՐՈՒՀԻՆԵՐ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՋՈՒՀԻՆԵՐ։

Դիմել՝ Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. դրասենեակը (Արաս-Աբրաշեան հրապարակ, տ. № 7.)։

տա. 886. 1—1

Բ Ժ Ի Շ Կ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ խմանաւորապէս կոկորդի, քթի ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12 ը։
Երեկոյեան » 5—7 ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։

տա. 779. 50—30

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

Բ Ժ Շ Կ Ո Ւ Հ Ի

ՍՕՖԻԱ ՄԻՐՋՕՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամէն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։

տա. 753. 50—37

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված միջոցով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերեուլկից։

(տ. օ.) տա. 515. 100—85

ՄԻԱՑԵԱԼ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

Անցեալ շաբաթ Վաշինգտոնում տեղի ունեցաւ Ամերիկայի Միացեալ Պետութիւնների պետական կօնգրէսը, և այդ առիթով հանրապետութեան նախագահ Վիլսոնը՝ կօնգրէսին ուղղեց իր թուղթը կամ բացման ճառը, որի մէջ երկարօրէն խօսում է արտաքին քաղաքական ընթացքի մասին։

Ինչպէս յայտնի է, թէ անցեալ և թէ այս տարի մի քանի անգամ տեղի ունեցան դիպլօմատիական ընդհարումներ տարաձայնութիւններ՝ Միացեալ Պետութիւնների և Գերմանիայի մէջ, և յարաբերութիւնները այդ երկու պետութիւնների մինչև շատ հեռու էին բարեկամական լինելուց. այլ երբեմն նոյնիսկ լարված դրութեան էին հասնում շնորհիւ այն հանգամանքի, որ Գերմանիան չէր յարգում չէզոք պետութիւնների վերաբերմամբ սահմանված ծովային օրէնքները։ «Լուզիտանիա» մեծ նաւի խորտակումը մինչև այսօր էլ չեն կարողանում մոռանալ ամերիկացիները։ Սակայն, չը նայելով այդ միջադէպերին, հիւսիս-ամերիկեան մեծ հանրապետութիւնը ամեն կերպ աշխատեց և աշխատում է չէզոքութիւն պահպանել։

Նորերս տեղի ունեցաւ որոշ լարված յարաբերութիւն Միացեալ Պետութիւնների և Անգլիայի մէջ, որ իրապէս ուրախացրեց գերմանացիներին։ Ինչպէս գիտենք հեռագիրներից, ամերիկեան կառավարութիւնը մի խիստ ծանուցագիր ուղարկեց անգլիական կառավարութեանը, բողոքելով այն միջոցների դէմ, որ սահմանել է Անգլիան ծովի վրա և որոնք սահմանափակում ու նեղում են Միացեալ Պետութիւնների առևտուրը չէզոք պետութիւնների և Գերմանիայի հետ։ Ամերիկան լայն առևտրական յարաբերութիւններ ունի չէզոք պետութիւնների, այն է՝ Շվեցիայի, Նորվեգիայի, Դանիայի և Հոլլանդիայի հետ, հայթայթելով նրանց իր հում նիւթերը և բերքերը առատ քանակութեամբ։ Արդ, այդ փոքրիկ չէզոք երկիրները, պէտք է ասել, ծառայում էին և այժմ էլ ծառայում են իբրև փոխադրական կայան Գերմանիայի համար, որ այդտեղից ստանում է իրան հարկաւոր բոլոր նիւթերը, հետեւաբար, բանից դուրս է գալիս, որ Անգլիայի հետ պատերազմող Գերմանիան շատ հեշտութեամբ ստանում է Ամերիկայից իրան հարկաւոր բոլոր նիւթերը, թէ ռազմական և թէ ոչ-ռազմական, ուրեմն Ամերիկայի չէզոքութիւնը միայն թղթի վրա է մնում։ Եթէ Ամերիկայի յայտարարած չէզոքութիւնը խստութեամբ պահպանվէր, Գերմանիան չը պէտք է կարողանար որեւէ մթերք, նիւթ ստանալ Ամերիկայից. և սրա արտահանութեան քանակը և ընդհանուր գումարն էլ պէտք է նուազէր. բայց այդ քանակը և գումարը ոչ միայն չէ նուազել, այլ և սաստիկ մեծացել է, որովհետև այժմ Գերմանիան ստանում է ամենը Ամերիկայից ուրիշ ճանապարհով, այն է՝ Շվէցիայի, Դանիայի, Հոլլանդիայի, Նորվէգիայի միջոցով։ Այդպիսի հանգամանքներում Անգլիան, անշուշտ, ստիպված էր միջոցներ ձեռք առնել խափանելու այդ օրինականացված կօնտրաբանդան, բայց որովհետև դա մեծ հարուած է հասցնում Ամերիկայի առևտրին, ուստի և սա բողոքեց Անգլիայի սահմանած միջոցների դէմ, և երկիւղ կար, որ յարաբերութիւնները երկու պետութիւնների միջև սաստիկ լարվեն։

Սակայն Գերմանիայի մի նոր դաւադրական ձեռնարկը եկաւ մոռացնել տալու կամ յետին մակարդակի վրա մղելու անգլօ-ամերիկական յարաբերութիւնները։ Նորերս ամերիկական կառավարութիւնը երևան հանեց մի ընդարձակ դաւադրութիւն, որ սարքել էին գերմանական կառավարութեան զինուորական և ծովային գործակալները ինչպէս և աւստրիական գործակալները, և որի նպատակն է եղել խափանել հայթայթումը դաշնակից պետութիւններին այն ռազմամթերքի, որ նրանք պատուէր են տուել Ամերիկայի գործարաններին։ Այդ դաւադրութիւնը գլուխ բերելու համար գերմանական գործակալները ծախսել են 27 միլիօն դոլլար կամ 54 միլիօն ռուբլի։ Պարզ է, որ գործակալները գործել են գերմանական կառավարութեան հաշւին։

Որպէսզի պատուէր տրված ռազմամթերքի հայթայթումը խափանվի, դաւադրութիւնը իրան նպատակ է դնում զինուորեալ ընդհարումն կամ պատերազմ առաջ բերել Միացեալ Պետութիւնների և Մեքսիկայի միջև. այդ դէպքում Միացեալ Պետութիւնները ստիպված կը լինէին գրաւել (ռեկվիզիցիայի ենթարկել) բոլոր այդ ռազմամթերքը, և պատուէր տուող դաշնակից պետութիւնները կը զրկվէին այդ ռազմամթերքից։

Երևան հանելով այդ դաւադրութիւնը, ամերիկեան կառավարութիւնը պահանջեց խստօրէն գերմանական կառավարութիւնից՝ յետս կոչել վերոյիշեալ գործակալներին։ Նախագահ Վիլսոնի թղթից երևում է, թէ որքան յուզված է ամերիկական հասարակական կարծիքը, քանի որ նա իր թղթի մէջ, ուղղված կօնգրէսին, ուղղակի պահանջում է աւելացնել զօրքի և նաւատորմի ծախսերը։

Չը նայելով այդ յուզմունքին և վրդովմունքին, պէտք է ասել, որ դժուար թէ Ամերիկան միջամտէ համաշխարհային պատերազմին և աւելի ձեռնտու կը համարէ իր համար պահպանել չէզոքութիւնը։

Այդ մասին յաջորդ անգամ.

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

— o —

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Հաղորդագրութիւն Դարդանէլում գործող զօրաբանակի մասին։

Լրացուցիչ տեղեկութիւնները հնարաւորութիւն են տալիս որոշել, որ նոյեմբերի 29-ին թշնամին մեր թընդանօթային կրակից ունեցել է շատ մեծ կորուստներ.

Նոյեմբերի 30-ին թիւրքական արտիլերիան ինչպէս եւրոպական, այնպէս և ասիական կողմից գործում էր մեծ եռանդով. Մեր թնդանօթները աջողութեամբ պատասխանում էին. Նրանց պաշտպանութեամբ մեր զօրքերը բարելաւեցին իրանց պաշտպանողական աշխատանքները, ուժեղացնելով նրանց նոր խումբերով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Համադանի ճանապարհի վրա մեր զօրքերը շարունակում են հետապնդել թիւրք-գերմանական զօրաբաժնին։

Համադանից մեր զօրքերի մօտ եկաւ մի պատգամաւորութիւն ազգաբնակութեան և ազդեցիկ խաների կողմից և պաշտպանութիւն խնդրեց ապստամբների դէմ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Արեւելեան զօրաճակատ։

Մեր զօրքերի նահանջը շարունակվում է լիակատար կարգով։ Բուլղարական յարձակումը մեր վերջապահ զօրամասի վրա հեշտութեամբ վանվեց։

Ներկայումս մեր բոլոր զօրքը գտնվում է յունաց սահմանի այն կողմը, ուր ոչ մի բուլղար զինուոր դեռ ոտք չէ դրել։

ՍՈԼՈՒՆ.—Բուլղար զօրքը յունական երկրի չէզոքութիւնը չէ խախտել։

Յոյն-սերբիական սահմանի երկարութեամբ, Դոյրանի մօտ, կանգնած է դաշնակից զօրքը, որ բուլղարների արշաւանքի դէպքում ցոյց կը տայ նրանց հարկաւոր դիմադրութիւնը, որպէսզի ապահովէ զօրամասերի նահանջը դէպի Սոլունի ամրացված բանակը։

Երեկ անգլիական զօրքերը շարունակեցին ափ իջնել։

Սոլունի շրջակայքում բանակել են մեծ թւով դաշնակից զօրքեր։ Բերդեր կառուցանելու աշխատանքները եռանդով առաջ են գնում։

Երէկ ստացված հրահանգի համաձայն, յոյն զօրքերի 3-րդ դիվիզիան Խալկիդիկի կղզուց և 5-րդ դիվիզիան Լանգադից սկսեցին եւ քաշվել Նօգրիտի, Սերրէսի, Նաուստի և Վօդէնի ուղղութեամբ, որպէսզի գործելու մեծ ազատութիւն տան դաշնակիցներին։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Իկսկիւլի մօտ թշնամու մի աէրօպլան ռումբեր նետեց։

Յակօբշտադտի շրջանում թնդանօթաձգութիւնը սաստկացաւ։

Ռիգայի շրջանում մեր թնդանօթային կրակը շատ տեղերում ցրեց գերմանացիներին, որոնք բերդեր էին կառուցանում։

Դնեստրի շրջանում՝ Զալեշչիկովից դէպի հիւսիս մեր հեծելավաշտերից մէկի հետախոյզները ընդհարվեցին թշնամու հետախոյզների հետ, որոնք հագել էին ռուսական զինւորի վերարկուներ և փափախներ։ Մերոնց ձայնին թշնամին կրակ բացեց։ Մեր հետախոյզների կրակից զգեստները փոխած աւստրիացիք մասամբ ոչնչացան, մասամբ ցրվեցին։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Դեկտեմբերի 1-ին թշնամին շարունակեց եռանդով ռմբակոծել մեր դիրքերը Իզոնզո գետի զօրաճակատի երկարութեամբ։ Մեր թնդանօթներն եռանդով պատասխանում էին։

ԼՈՆԴՈՆ.—Մամուլի բիւրոն հրատարակել է գլխաւոր բանակի հետեւեալ հաղորդագրութիւնը.

Մեր արտիլերիան երէկ ռմբակոծեց Գոմէկուրը, Ժիվանշիից դէպի արեւելք գտնվող թշնամու խրամատները և Լեմէնիլ գիւղը։ Թշնամու թնդանօթները եռանդով կրակում էին մեր խրամատները Իպրից դէպի արեւելք, որին մեր թնդանօթները եռանդով պատասխանում էին։ Մենք ձեռքի ռումբերով մեծ իրարանցում ձգեցինք թշնամու խրամատների մէջ Լէտոկում։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական երեկոյեան հաղորդագրութիւն.

Թնդանօթային կռիւները զօրաճակատի զանազան մասերում աջող էին մեզ համար։

Շամպանիում մեր թնդանօթային կրակը առաջ բերեց ուժեղ պայթում, որին հետեւեց հրդեհ։

Վօգեզներում թշնամին յախուռն ռմբակոծութիւն ուղղեց մեր խրամատների դէմ. մեր թնդանօթները պատասխանում էին։

Մեր աէրօպլաններից 11 հատը նետեցին 195 ռումբ Միւլհէյմ կայարանի վրա։ Ուրիշ 22 աէրօպլաններ նոյնպէս աջողութեամբ ռումբեր նետեցին թշնամու զօրքերի վրա Օրիօկուրում և, վերջապէս, ուրիշ 12 աէրօպլան ռմբակոծեցին աջողութեամբ գերմանական պաշտպանողական ամրութիւնները Շամպանիում։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 դեկտեմբերի

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.— Հերքելով արտասահմանեան տեղեկութիւնները, թէ իբր Բեռլինում ցոյցեր են տեղի ունեցել րայխստագի բացման օրը, Վօլֆի գործակալութիւնը միեւնոյն ժամանակ խոստովանում է, որ ցոյց արդարեւ տեղի է ունեցել, բայց այն ձեւով, որ Լիբկնեխտի մօտ 1000 համախոհ ժողովվեցին փողոցում, որոնց և ոստիկանութիւնը իսկոյն ցրեց։ Մինչդեռ մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, ցոյցին մասնակցել են հոծ ամբոխներ սօցիալ-դեմօկրատներից։

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների պալատում Տենանտը յայտնեց, որ գեներալ Սմիտ Դորրիէնը հրամանատարելու է զօրքերին Արեւելեան Աֆրիկայում։ Կառավարութիւնը լրացուցիչ գումարներ է խնդրում նոր մի միլիոն զինւորի համար։ Այդպիսով զօրքերի թիւը հասնում է 4 միլիոնի։

Ներկայ պարլամենտի նստաշրջանը, ընդհանուր ընտրութիւններից խուսափելու համար, շարունակվելու է մինչև 1916 թւի յունվարը։

«Թայմսի» թղթակիցը Սօլունից հաղորդում է, որ Մօնաստիրն անվերադարձնալիօրէն անցնում է Բօլգարիայի իշխանութեան և որ այնտեղ սահմանվելու է զուտ բօլգարական վարչութիւն։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ. «Բերլ. Տագ.»-ի տեղեկութեան համաձայն, րայխստագի նիստերը շարունակվելու են մինչև Ծնունդը։ Հետեւեալ նստաշրջանը բացվելու է 1916 թ. մարտին։

ՏՕԿԻՕ.—Ստորին պալատում արտաքին գործերի մինիստրը ասաց, որ կառավարութիւնը անհրաժեշտ գտաւ միանալ Լօնդօնում ստորագրված դեկլարացիային՝ Գերմանիայի հետ անջատ հաշտութիւն չը կնքելու մասին և խորհուրդ տալ Չինաստանին յետաձգել միապետութեան վերականգնումը։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Րայխստագի երէկվայ նիստում Լիբկնեխտը մի շարք հարցապնդումներ ուղղեց ներքին քաղաքականութեան մասին։ Առաջին հարցապնդումներին ստատս-սեկրետար ֆօն-Եագօվը տուեց խուսափողական պատասխաններ, իսկ երկրորդների քննութիւնը պրեզիդիումը թոյլ չը տուեց։ Յետոյ ֆինանսների մինիստր Գելֆերիխը, պատճառաբանելով նոր 10 միլիարդ փոխառութեան նախագիծը, յայտնեց, որ պատերազմական ծախքերն ամեն ամիս անցնում են 2 միլիարդ մարկից։ Վերջին փոխառութեան դրամը լրվին ծախսվել է։

«Բերլինգսկէ-Տիդենդէին» հեռագրում են Հաագայից. «Պարզված է, որ գերմանացիք վերջերս կատարել են զօրքերի մեծ տեղափոխութիւններ։ Զօրքերը դիմում են դէպի արեւմուտք և կազմակերպված են ոչ միայն պահեստի գնդերից, այլ և մասամբ ռուսական ու սերբիական զօրաճակատներից։ Զօրքերի տեղափոխութիւնը կատարվում է մասամբ Լիւկսենբուրգի վրայով և ապա Լիէժով, և մասամբ Մէցի վրայով՝ Սուասօնի ուղղութեամբ։ Պարզվում է, որ պատրաստվում է գերմանական նոր հսկայ արշաւանք»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պօլսից հաղորդում են, որ թիւրքաց զօրքերը շարունակում են մնալ Թրակիայում՝ թիւրք-բօլգարական սահմանի մօտ, որովհետեւ Բօլգարիան տակաւին չէ թոյլատրել այդ զօրքերին անցնել իր երկրի միջով։ Պնդում են, որ բօլգար կառավարութիւնը մտադիր է իր համաձայնութիւնը տալ, որպէսզի թիւրք զօրքերը ոտք դնեն իր հողը՝ սոսկ ամենածայրայեղ անհրաժեշտութեան դէպքում, որովհետեւ երկիւղ է կրում, որ այդ զօրքերի անցնելու ժամանակ՝ Բօլգարիայի վրայով՝ առաջ գան անհաճելի հետեւանքներ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պարիզից հեռագրում են. «Պատգամաւորների պալատը վերացրեց զինուորա-դաշտային դատարանները, որոնք ծագել էին պատերազմի սկզբում։ Օրէնագիծը ընդունվեց միաձայն»։

◆ «У. Р.»-ն գրում է. «Սազօնովը ֆրանսիացի մի ժուրնալիստի ասաց. «Կասկած չը կայ, որ դաշնակիցների առաջ դժուարութիւններ կը ստեղծվէին այն րօպէից, երբ գերմանացիներին աջողվի կապ հաստատել Թիւրքիայի հետ։ Սակայն գերմանացիք սխալվում են, կարծելով թէ դրանով կը լուծեն բոլոր խնդիրները։ Նրանք վերագնահատում են Թիւրքիայի ռեսուրսները։ Դաշնակիցների դերը միանգամ ընդմիշտ որոշված է։ Նորանոր գործողութիւնների համար պատրաստութիւնը ընթանում է փութանակի՝ մանաւանդ Ռուսաստանում, և երբ այդ պատրաստութիւնը վերջանայ, Գերմանիան կը հասկանայ ժամանակաւոր յաջողութիւնների արժէքը»։

◆ Թեհրանից հաղորդում են, որ Սուջ-Բուլաղի շրջանի քիւրդական ցեղերը հպատակութիւն յայտնեցին մեր զօրքերին։

◆ Դաշնակիցները եռանդով ամրացնում են Սալոնիկը։

◆ Յունաստանը կատարեց դաշնակիցների բոլոր պահանջները։ Կոնստանտին թագաւորը երաշխաւորել է, որ յունաց զօրքի հետ միջադէպ տեղի չի ունենայ։

◆ Կ. Պօլսում թռուցիկներ են լոյս տեսել կառավարութեան դէմ։

◆ Վերջերս Չեռնօգորիայում սաստկացել են պարտիզանական կռիւները։

◆ Ղալաթիայում կանայք և երեխաները ցոյց են կազմել, հաց պահանջելով։ Թիւրքերը հրաժարվում են ուղարկել իրանց զօրքերը դէպի մակեդօնական զօրաճակատը։

◆ Աւստրիական և գերմանական հիւպատոսները պատրաստվում են մեկնել Սալոնիկից։ Քաղաքը յայտարարված է պաշարողական վիճակում։

◆ Յոյն սօցիալիստները հրավարտակով յորդորում են պաշտպանել Վենիզելոսին և հանդէս գալ յօգուտ քառեակ համաձայնութեան։

◆ 500 աւստրիացի ժանդարմ ուղարկվել են Կ. Պօլիս։

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թեհրանից հեռագրում են, որ ազգային պաշտպանութեան կոմիտէտը թռուցիկներով դիմեց պարսկահայերին, յորդորելով կատարել իրանց պարտականութիւնները հայրենիքի վերաբերութեամբ։

Կոմիտէտը յորդորում է հայերին մնալ չէզոք՝ առաջիկայ կռւի մէջ, եթէ միայն Ռուսաստանի և Անգլիայի դէմ միացեալ աշխատանքը նրանց համար անկարելի է։

Քանի հայերը կը պահեն չէզոքութիւն, նրանք առիթ չունեն վախենալու, որովհետեւ պարսիկ ժողովուրդը երբեք չի մոռանայ այն ծառայութիւնը, որ ցոյց տուին հայերը յեղափոխութեան ժամանակ Մահմէդ-Ալի շահի դէմ։

Թռուցիկների մէջ, սակայն, պարզ լսվում է սպառնալիքի տոն։

Կոմիտէտը հասկացնել է տալիս, որ կարող են սկսվել հայկական ջարդեր։

(Սեփ. թղթակցից)

Ղազվին, 23 նոյեմբերի

Համադանի տեղական հայերը, անկարող լինելով քաղաքից հեռանալ, մնացել են այնտեղ, իսկ օտարահպատակ հայերն արդէն գաղթել են դէպի Ղազվին, որտեղից և ցրվեցին զանազան կողմեր։ Մինչև այսօր Համադանի հայոց վիճակը որեւէ վտանգի չէ ենթարկվել։ Այն հանգամանքը, որ Համադանի հայերը նոյնիսկ նիւթական տեսակէտից անկարող էին գաղթել, այլ ոչ միայն այն պայմանների սովրմամբ, որ յանկարծակի սկսվեց ճանապարհների փակվելը վայրենի կողոպտիչ քիւրդերով, մեզ բերում է լուրջ մտածողութիւնների առաջ, որ առ հասարակ պարսկահայ ինտելիգենցիան և գործիչները իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած և եթէ մի ընդհանուր գաղթի դիմէ կամ նոյնիսկ շրջապատված թշնամիներից՝ ստիպված մնալու լինի հայութիւնը այս երկրում, պէտք է սովի ճիրաններում մահանայ։ Ժամանակ է, որ ազգի ընդհանուր շահերի տեսակէտից՝ ամեն քաղաքներում ստեղծվէին բուն ժողովրդից ընտրված մարմիններ, որպէսզի ծանր օրերում գոնէ անօգնական ժողովրդին մի փոքրիկ աջակցութիւն ցոյց տային, այլ ոչ թէ իրանց հարստութեան վրա կրծնած՝ վտանգի րօպէին թողնեն ազգն ու մազապուրծ փախչեն դեռ նոյնիսկ վտանգը չը սկսած, ինչպէս պատահեց նորերս Համադանում, ուր հարուստ, «ազգասէր» և «ինտելիգենտ» տարրը փախել է, թողնելով այնտեղ բազմաթիւ ազգակիցների, որոնք անկասկած այժմ գործ չունենալու պատճառով՝ տառապում են քաղցից։

Եթէ Համադանի մէջ հայոց վիճակը վատանայ, այսինքն արիւնռուշտ քիւրդերը և տեղի պարսիկ ֆիդայիները ուզեն ջարդ սարքել, մեծ յոյս ունենք, որ ամերիկական միսսիօնարութիւնը հնարաւորութիւն կունենայ արգելելու այդ ջարդը՝ առնելով հայերին իր հովանաւորութեան տակ. բայց հակառակ դէպքում՝ եթէ Համադանում հայկական ջարդ սկսվելու լինի, դա առաջին ազդանշանը կարելի կը լինի համարել Պարսկաստանում հայերի կոտորածի։ Այսպիսի հանգամանքների նախ քան վրա հասնելը՝ լաւ կը լինի եթէ պարսկահայ ազգային գործիչները, քանի դեռ ուշ չէ, լրջօրէն մտածէին, թէ ի՛նչ կերպ հնարաւոր կը լինէր հեռացնել ապագայ վտանգը և կամ պատրաստ լինէր դիմագրաւել նրան և ազատել մեր գիւղացի, արհեստաւոր աղքատ ժողովրդին։

Ս. Յովեան

ԻՇԽԱՆ ԲԻՒԼՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գերմանական նախկին կանցլեր իշխան Բիւլովը, որ այժմ ապրում է «Notre-Dame-d'Ermites», Շվից կանտոնում, ամեն օր այցելում է աբբա Շտոլցինգերին, Էյնզիդելնի Բենեդիկեան վանքի վանահօրը։ Այդ այցելութիւնների ժամանակ նա տեսնվում է Իտալիայից և չէզոք երկրներից եկած տարբեր մարդկանց հետ։ Խօսակցութեան նիւթերը ցոյց են տալիս, որ իշխան Բիւլովի Շվէյցարիա գալու նպատակը միայն իր առողջութեան վերականգնումը չէ։ Իշխան Բիւլովի յայտարարութիւնից անգլիական «Standarp» թերթը հետեւեալ եզրակացութիւնն է անում.

1) Գերմանիան մտադիր չէ հաշտութեան դաշինքի պայմանները քննել միջազգային կօնգրէսում, նման նախկին կօնգրէսների։

2) Գերմանիան մտադիր է անջատ հաշտութիւն կնքել իւրաքանչիւր կռւող պետութեան հետ, թէև, հաւանօրէն, այդ հաշտութեան բանակցութիւնները պէտք տարվեն միաժամանակ։

3) Գերմանիան չի ընդունելու Միաց Պետութիւնների միջնորդութիւնը և չի տայ, որ Ամերիկան միջամտի եւրօպ կան քաղաքականութեան մէջ, որովհ նախագահ Վիլսօնը, Բերլինի կառավ շրջանների կարծիքով, պահպանում է չէզոքութիւն, որ բարեհաճական է դէ Անգլիան։

4) Գերմանիան թոյլ չի տայ, որ Եա նիան միջամտի եւրօպական գործերին։

5) Իտալիայի հետ հաշտութիւն կնք բացառապէս միայն Աւստրիայի գործ ըստ որում Անգլիայի և Ֆրանսիայի մի մտութիւնը առանձնացվում է։

6) Բելգիայի բաղդը կախված է լին Գերմանիայից։

7) Գերմանիան, Աւստրիան, Թիւրքիան Բօլգարիան հաշտութեան կը կնքեն Ռուսա տանի հետ առանց միջամտութեանը մտեան կռւող պետութիւնների։

8) Երբ հաշտութեան պայմանները մշա ված լինեն, Գերմանիան պատրաստ լինի համաձայնել միջազգային կոնգր գումարման, բոլոր պետութիւններին վե բերող ընդհանուր հարցեր քննելու համ ինչպէս, օրինակ, ծովերի ազատութիւնը։

9) Եթէ չէզոք երկրներին ցանկալի է րեէ հարցի լուծումը, այդ դէպքում նրա վաղօրօք պէտք է հարցերը ներկայաց այն պետութիւնների խմբի կառավար թիւններին, որոնք պէտք է թելադրեն հա տութեան պայմանները։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ Է ԱՒՍՏՐԻԱՅ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԿՆՔԵԼՈՒ

Հռոմի չէզոք դիպլօմատիական աղբիւր «Daily News»-ը հաղորդում է, որ Վի հէլմ կայսրի Վիէննա այցելելու նպատա այն է եղել, որպէսզի Ֆրանց-Յօսէֆի հետ կանգնեցնի իր մտադրութիւնից՝ Ռու սաստանի հետ անջատ հաշտութիւն կնքե համար բանակցութիւններ սկսելու։ Աւստ րիական պալատական շրջանները մտադի էին դիմել սպանական թագաւոր Ալֆօ XIII-ին, առաջարկելով իր վրա վերցն հաշտութեան միջնորդութիւնը Ռուսաստան հետ բանակցելու։ Բացի այդ՝ աւստրօ-ունգարական կառավարութիւնը յայտնել էր գիտութիւն Բենեդիկտոս XV պապին, որ ինքը բարեհաճակամ է վերաբերվում պապ ջանքերին՝ խաղաղ յարաբերութիւններ վե րականգնել կռւող ժողովուրդների միջ Վիլհէլմ կայսրը՝ իմանալով Աւստրօ-Ունգարիայի մտադրութեան մասին, իշխան Բիւլովին ուղարկեց Շվէյցարիա և Կեօնի արքեպիսկոպոս Հարտմանին՝ Հռոմ։ Նրանց երկուսին էլ տրված էր առանձին յանձնա րարութիւն՝ խանգարել անջատ հաշտութեա Աւստրօ-Ունգարիայի և Ռուսաստանի միջ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶՕՐՔԻ ԹԻՒԸ

Հօլլանդական «Telegraaf» լրագիրը գրում է, որ պատերազմը յայտարարելու միջոցին Գերմանիան հաշւում էր 13.100,000 մարդ զինուորական ծառայութեան պիտանի՝ 18 տարեկանից մինչև 45 տարեկանը։ Այս թւից պէտք է դուրս ձգել 750,000-ը, որոնք ան հրաժեշտ են երկաթուղային հաղորդակցու

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԱՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ

«Հոգւոյ յոգնածութեան ճգնաժամերին, երբ յիշողութիւնս վերակենդանացնում է անցեալի ստուերները, որոնցից մի տեսակ սառնութիւն է իջնում իմ սրտի վրա, երբ միտքս, նման աշնանային աղօտ արեգակի, լուսաւորում է ներկայի ահեղ քաօսը և չարագուշակ կերպով պտտվում միեւնոյն կէտում՝ անզօր աւելի բարձր ելնելու, առաջ թռչելու. հոգւոյ յոգնածութեան այդ ծանր ժամերին իմ երեւակայութեան թափով ես պատկերացնում եմ իմ առջև Մարդու վեհանձն կերպարանքը։

«Մա՛րդը։ Կարծես մի արեգակ է ծագում իմ կրծքում, որի պայծառ լոյսով դանդաղ քայլում է, որպէս անընդգրկելի մի աշխարհ, ողբերգականօրէն գեղեցիկ Մարդը, քայլում է միշտ դէպի առաջ, միշտ դէպի վեր»…

Որքա՜ն վեհ ու կորովի էր հնչում Մաքսիմ Գորկիի այս ներբողը՝ մարդուն ուղղած՝ 1905 թւի նախօրեակին, երբ մարդը կոչված էր թափ ու ոգեւորութիւն ներշնչելու կեանքի վերանորոգութեան նուիրական գործին։ Գոռ պայքարի նախօրեակին Գորկիի մտքերը իդէալիստական էին, և մարդը իր մտքի կորովով, իր հոգեկան աշխարհով խորհրդաւոր ու իդէալական կերպարանք առնէր նրա աչքում։ «Հպարտ և ազատ Մարդը» դանդաղ ու հանդիսաւոր քայլում է միշտ առաջ գոյութեան հանելուկների, կեանքի վրիպումների միջով։ Լուսաւոր փարոսը՝ դա մարդկային միտքն էր, որը անօրինակ թռիչքներ պիտի գործէր՝ ցնցումներ հագած հին ճշմարտութիւնների, թռուցիկ նախապաշարմունքների ժխորում։ Եւ իր մտքի թափով Գորկիի Մարդը պիտի խորտակէր հին ճշմարտութիւնները, հանդգնէր կախաղանների այրող կայծերը և ապա վեհ ու համարձակ դէպի առաջ դիմէր, դէպի վեր սաւառնէր…

«Ես կոչված եմ,—ասում է Գորկիի Մարդը,—ամբողջ տիեզերքը լուսաւորելու… Իմ և տիեզերքի միջև եղած ներդաշնակութիւնը գտնելու, իմ մէջ ես ներդաշնակութիւն ստեղծելու, կեանքի մռայլ քաօսը… ժանտ աղտեղութիւնը անցեալի խորխորատը գլորելու»…

Եւ որքա՜ն վեհ ու կորովի էր հնչում Մաքսիմ Գորկիի այս ներբողը 1905 թւի նախօրեակին, այնքան հեգնական ու դառնաղէտ է հնչում նա այժմ՝ մեր կեանքի այս ահաւոր օրերին։ Մարդը դարձել է վայրենական բնազդների կոյր գործիքը. իր կուլտուրական միսսիան նա ուզում է կատարել սրի և հրի միջոցով. նա մոռացել է իր բազմիցս անգամ կրկնած «լուսաւոր» մտքերը, «իդէալական» ձգտումները, յանուն «մարդասիրութեան» կատարած փորձերը, մոռացել է իր բոլոր փիլիսոփայական խոկումները՝ մարդկային բարձր էութեան նկատմամբ և այլն և այլն։ Մարդկային հոգու ստորագոյն գծերը երբէք այնքան ցայտուն ու յամառ բնոյթ չեն ունեցել, որքան այսօր։ Քսաներորդ դարի մեծ էպօպէան, ազգերի այսօրվայ արիւնաշաղախ իրականութիւնը, բաց է արել մեր առաջ մարդկային պատմութեան ամենամռայլ շրջաններից մէկի էջերը։ Մենք չենք ճանաչում երէկվայ կուլտուրական, մարդասէր, կօրեկտ մարդուն. նա վայրենացել է, դարձել է արիւնռուշտ. նոյնիսկ երէկվայ սանտիմենտալ, արեան կաթիլի առջև ջղաձգութիւններով գալարվող ներդաշնակ մարդը այսօր արեան հեղեղներով է քայլում, կռւի դաշտում նիզակներ ճօճում։ Այժմեան էպօպէայի իւրաքանչիւր հերոսի նկատմամբ կարելի է ասել, որ նա կոչված է «տիեզերքը» խաւարի մէջ սուզելու, «իր և տիեզերքի միջև եղած ներդաշնակութիւնը» խորտակելու, տիրող քաօսը աւելի մռայլելու և կեանքի ժանտ աղտեղութիւնը համատարած դարձնելու համար։ Մարդու համար սրբութիւն չէ մնացել, ընչաքաղցութիւնն ու շահը իսպառ վտարել են նրա սրտից մարդկային սովորական զգացումները։ Իր բոլոր այժմեան գործողութիւններով նա քայլում է դէպի նախնական դրութիւն, երբ ցեղերը ամեն մի թիւրիմացութիւն և շահերի ընդհարման խնդիր պարզում էին արեան ճակատներում։ Մարդը գազան է եղել և գազան էլ մնացել է. նա գազան է բանական, գազան կուլտուրական։ Տարբերութիւնը իր և իր նախահօր միջև այն է, որ մէկը իր նմանին մահակով է ոչնչացնում, միւսը թնդանօթով, և մահակի կատարած սպանութիւնը անհատական է, թնդանօթինը՝ մասսայական։ Վերադարձ դէպի բարքերի կոպտութիւն, դէպի նախնական վայրագութիւն։

Եւ երբ ներկայ համաշխարհային ողբերգութեան օրերին շատ յաճախ պաշարում են ինձ տխուր մտքերի ամբողջ շարաններ մարդու անհատական էութեան մասին, ես իսկոյն յիշում եմ բելգիական նշանաւոր գրող Մէթերլինգին և նրա «Հեզերի գանձը» գրուածքը։ Յիշում եմ նրան, որովհետեւ յանձին Մէթերլինգի խօսում է վաղեմի իդէալիզմի տաղանդաւոր ներկայացուցիչը, իդէալիզմի, որը իրական երեւոյթների նկատմամբ ճակատագրական վրիպումներ է ունեցել։ «Հեզերի գանձում» հեղինակը փորձում է ընդգծել ժամանակակից քաղաքակիրթ մարդու հոգեկան աշխարհի զարմանալի «նրբութիւնը»։ Տարօրինակ զուգադիպութիւն։ Յատկապէս քաղաքակիրթ մարդկութեան հոգեկան «բարձր» յատկութիւններին մեծ արժէք տուող Մէթերլինգը իր աչքերով տեսաւ, թէ ինչպէս այդ «քաղաքակիրթ մարդկութիւնը» ամենից առաջ նրա հայրենիքը ոտնատակ արաւ։

Դեռ պատերազմի նախօրեակին Մէթերլինգը համոզված էր, որ մարդիկ սկսել են ընթանալ մի նոր ճանապարհով, որ հասել է նրանց հոգու արթնացման ժամը, որ մարդիկ դարձել են աւելի նուրբ և դիւրազգաց, անցել են վայրագութեան ու ֆիզիքական բռնութեան շրջանները։ «Անկասկած է, ասում է նա,—որ հոգեկան աշխարհը օրէցօր աւելի և աւելի ընդլայնվում է։ Այժմ մեր հոգին աւելի մօտ է մեզ, քան մեր տեսանելի էութիւնը, և մեր գործողութիւնների մէջ նա աւելի է միջամտում, քան երկու կամ երեք դար սրանից առաջ։ Մենք կարծես մօտենում ենք մի հոգեկան շրջանի»։ Մարդկանց հոգիները, ըստ Մէթերլինգի, այժմ սկսում են իրար հասկանալ և զգալ։ Մարդկանց մէջ առաջ է գալիս մի տեսակ մերձեցում։ «Նրանք սկսում են մօտենալ թէ իրանց ներքին աշխարհին և թէ իրանց եղբայրներին. նրանք սկսում են թափանցել իրար ներսը, սկսում են սիրել միմեանց աւելի անկեղծ և լուրջ»։ Մէթերլինգին թւում էր, թէ մարդկութիւնը այժմ (պատերազմից առաջ) թեւակոխել է հոգեկան կեանքի այնպիսի շրջանը, ուր նա պատրաստ է իր վրայից դէն շպրտելու «նիւթի ծանրագոյն լուծը»։ Մեծամեծ ճիգեր է գործ դնում այժմ մարդկային հոգին. այնքան է նա նրբացել. երբէք նա այնքան բազմակողմանի և անյաղթելի չէ եղել, ինչպէս այժմ։ «Ինձ թւում է,—ասում է Մէթերլինգը,—որ մարդկութեան հոգեկան ազատագրման համար հազիւ թէ աւելի յարմար ժամանակ լինի, քան այժմ է… Հոգեկան երեւոյթների, հոգիների մերձեցման մասին առաջներում խօսք անգամ չէ եղել»… «Մինչդեռ այժմ մարդկային հոգին առաջին տեղն է բռնում և նրա խորհրդաւոր գործողութիւնը ստանում է ընդհանուր բնոյթ»։ Հոգեկան արթնացումը կատարվում է, և վերջինիս հետ են կապված մարդկանց «եղբայրութիւնն ու խորհրդաւոր ակնկալութիւնները»։ Եւ «ծայրայեղ պօզիտիվիզմը», որ թագաւորող էր մինչև այժմ, ըստ երեւոյթին, մօտենում է իր վախճանին, պնդում է Մէթերլինգը։

Ինչպէս իդէալիստական բոլոր մտածումները, այնպէս և Մէթերլինգի փիլիսոփայական խօհերը անողոք կեանքը ծաղրեց ու հեգնեց ամենադաժան կերպով։ Դեռ երէկ էր, որ սիմվօլիզմի փիլիսոփան քաղաքակիրթ մարդկութեանը «հոգեկան» տարր էր հռչակում, մինչդեռ իրական կեանքն այսօր ճիշդ դրա հակառակն ապացուցեց։ Մարդկութիւնը «նիւթական» դուրս եկաւ կատ զանցօրէն յանուն «նիւթի», յանուն ընչա քաղցութեան նա դիմեց բարբարոսակա միջոցների։ Մէթերլինգը մարդու մէջ հ գու նրբութիւն էր գտնում և դա նրա ներ քին խորութիւնը համարում՝ մարմնի ար տաքին կեղեւի տակ պահված. կեանքը ապա ցուցեց, որ ներքին խորութիւնը՝ դա ժամա նակակից քաղաքակիրթ մարդու բարբար բնազդներն են եղել, իսկ արտաքին կեղեւը՝ «հոգեկանի» թեթեւ շղարշը, քօղը։ Իր ներքին խորութեամբ մարդը՝ նախ գազան է, ապա մարդ։ Դիտեցէք ձեր շուրջը։ Ո՞ւր է «հոգու արթնացման» փաստը, ո՞ւր է «հոգիների մերձեցման» ապացոյցը, ո՞ւր են՝ այդ երկ երեւոյթների վրա հիմնված մարդկանց «եղ բայրութեան և խորհրդաւոր ակնկալութիւն ների» օրինակները։ Այն ահռելի խարոյկը, որ բռնկվել է ամբողջ Արեւմուտքում։ Ան գամ ամենաքաղաքակիրթ ժողովուրդների հասարակական կեանքը թեւակոխել է համաշ խարհային պատմութեան մէջ չը տեսնված մի ահաւոր շրջան։ Տեղի է ունենում մարդ կային վայրագութեան ամենասոսկալի փաստը։ Մարդկային կեանքը իսպառ կորցրել է իր գերագոյն արժէքը։ Փոխադարձ բնաջնջման մի խելագար տենդով է բռնվել գրեթէ հա մայն Եւրոպան։ Մարդկային ազգի ոչնչացման գաղափարը հասցված է այն ծայրայեղու թեան, որտեղ «գազանայինը» մարդկային վայրագութեան առջև սոսկ մի իլլիւզիա է, իրականի առջև կատակ նկար, որովհետեւ մարդը մարդուն ձգնում է ոչնչացնել և ծո վի երեսին ու խորքում, և օդում ու ցա մաքում, ձգնում է ոչնչացնել սրով, ջրով, հրով ու գազերով, և այնու ամենայնիւ յա գեցում չը կայ։

Միթէ մեր այժմեան կացութիւնը չէ յի շեցնում միջնադարեան մռայլ պատմաշըր ջանը իր կործանարար պատերազմներով (հարկաւ փոքր մասշտաբով), անվերջ բռնութիւններով, ուր բարքերը կոպ տացել ու վայրենացել էին, ուր ամենաբիրտ

Թիւնների համար արևմտեան և արևելեան ռազմաբեմերում։ 350,000-ը կազմում են Բէլգիայի գարնիզօնները և մօտ 1.700,000-ն էլ աշխատում են ձեռնարկութիւններում, գործարաններում, ծառայում են զօրքի և ազգաբնակութեան կարիքներին։ Մնացած 10,400,000-ից կռիւներում ընկել են (վիրաւոր ու սպանված) 6 միլիոն։ Հետևաբար, ներկայումս Գերմանիան ունի 4.400,000 մարդ։ Թէև վիրաւորների մի նշանաւոր թիւը նորից վերադառնում է ռազմաբեմ և երիտասարդութիւնը ստանում է զինուորական ուսում, բայց և այնպէս Գերմանիային կործանման դուռը կը հասցնի հէնց մարդկանց պակասութիւնը, որը հետզհետէ աւելի ու աւելի ուժեղ կերպով է զգացնել տալիս իրան։

«VORWARTS»-Ը ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գերմանական սօց.-դեմօկրատների «Vorwärts» թերթը իր վերջին համարներից մէկում մանրամասն կանգ է առնում անգլիական պալատի վերջին վիճաբանութիւնների, առանձնապէս լորդ Կուրզոնի ճառի վրա։ Այս վիճաբանութիւններից նա եզրակացնում է, որ Անգլիայում հաշտութեան բանակցութիւններ սկսելու հիմնական բազա կը համարէին, եթէ 1) Էլզաս-Լօթարինգիան վերադարձվէր Ֆրանսիային. 2) գերմանական զօրքը հեռանար Բէլգիայից և Ֆրանսիայի հիւսիսային մասերից՝ 3) մերժվէին կօնտրիբուցիայի պահանջները և 4) պարզվէր ծովերի ազատութեան հարցը։

Այս ասելուց յետոյ գերմանական սօց.-դեմօկրատների կենտրօնական օրգանը, չափազանց զգոյշ կերպով, ըստ երևոյթին՝ ցենզուրայից խուսափելու համար, յայտարարում է, որ Անգլիայում ձևակերպված հաշտութեան պայմանները անկասկած կարող են ելակէտ ծառայել այդ հարցի ազատ քննութեան համար։

«Եթէ մեր կառավարութիւնը չի կարող վճռել, որ առաջինը ինքը խօսի, ասում է «Vorwärts»-ը,—ուրեմն թող նա այդ բանը յանձնի հասարակական կարծիքին։ Եթէ նա կարծում է, որ պատերազմի նպատակների հարցի քննութիւնը մամուլի մէջ և ժողովներում, ներքին քաղաքական պատճառներով, անյարմար է, թող ուրեմն սկիզբը դրվի բէյխստագում։ Հէնց այնտեղ մենք պարտաւոր ենք պարզ ձևով հասկացնել, թէ ինչ ենք մտածում մենք Էլզաս-Լօթարինգիայի մասին, ինչ ծրագիրներ ունենք Բալգիայի և Ֆրանսիայի հիւսիսային շրջանների, ծովերի ազատութեան և շատ ուրիշ բաների վերաբերմամբ։ Բաւական չէ ամեն օր կրկնել, թէ մենք մտադիր ենք «պատերազմը տանել մինչև վերջը»։ Եթէ մենք պահանջում ենք ուրիշներից, որպէսզի նրանք յայտնեն մեզ, թէ իսկապէս ինչ ի նկատի ունեն, խօսելով գերմանական միլիտարիզմի ոչնչացման մասին, ուստի մեզ հետ կռւող ժողովուրդներն էլ բնականաբար՝ անվիճելի իրաւունք ունեն իմանալու, թէ ի՛նչ նպատակների ենք հետամուտ մեր մտադրութեամբ՝ «դիմանալ մինչև վերջը»։ Այն րոպէին, երբ այս բոլոր հարցերը կը ստանան համապատասխան լուսաբանութիւն, մենք որոշ չափով առաջ կերթանք հաշտութեան խնդրի մասին Եւրոպայի մէջ։ Ուրեմն խօսքը պատկանում է բայխստագին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՈՒՐՍ ԵԿԷՔ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՇՐՋԱԳԾԻՑ

II

Օրինակը հէնց Վանից վերցնենք։

Այն միջոցին, երբ Կովկասի մէջ կազմակերպվում էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, Վանում կազմվել էր արդէն «Արմենական» կուսակցութիւնը, զուտ Թիւրքահայերից և Թիւրքահայերի նախաձեռնութեամբ, որ նպատակ էր դրել ձեռք բերել հայ ժողովրդի համար գոյութեան լաւագոյն պայմաններ, բայց Հնչակեանութիւնից և Դաշնակցութիւնից տարբեր միջոցներով։ Արմենականութիւնը դէմ էր բոլորովին կուսակցական թմբկահարութեան. իր մեթոդն էր պատրաստվել առանց աղմուկի, պատրաստվել ոչ թէ միայն զէնքով, այլ և նիւթապէս, կուլտուրայով։ Սպասել կազմ ու պատրաստ և քաղաքական նպաստաւոր մէկ վայրկեանին՝ հրապարակ գալ իբրև մի պատկառելի ոյժ, որ չէ կարելի նկատողութեան չառնել։ Այս գաղափարները, որ քարոզում էր այն միջոցին Մ. Փորթուգալեանի «Արմէնիա» թերթը, ինչպէս և նրա գործունեայ և տաղանդաւոր պրօպագանդիստը՝ Մկրտիչ Աւետիսեան, ժամանակին անծանօթ չէին կովկասեան և արտասահմանի հայութեան։ Սա հայ իրականութեան պահանջներին համապատասխան մի ծրագիր էր, որ կարող էր տանել պայծառ աջողութեան, և սակայն նա արհագանք չը գտաւ արտասահմանի մէջ։ Նա 1896-ին ի հանդէս բերաւ մի բաւական նշանակելի ոյժ, որ փրկեց Վանի գոյութիւնը, բայց որ յետոյ ս. Բարդուղիմէոսի վանքի առաջ զոհ տուաւ իր հատընտիր մատաղ ոյժերը, և որից յետոյ, մինչև Թիւրքական սահմանադրութիւնը, իր գոյութիւնը պահելով մէկտեղ՝ ստիպված եղաւ տեղի տալ Դաշնակցութեան գրոհի առաջ, որ իր նիւթական և բարոյական ոյժերը ստանում էր Կովկասից։ Եթէ արդի և այն ժամանակվայ ռուսահայ և Թիւրքահայ քննադատները ստեղծէին իրանց համոզմունքի համաձայն մի կուսակցութիւն, կամ միանային արմենականութեան հետ, եթէ հասարակութիւնը չէզոք հանդիսատեսի դերի մէջ մնալու փոխարէն ստեղծէր մի ուժեղ հակահոսանք, օ՜, վստահ եղէք, որ ամեն մի տասը հոգինոց խումբը չէր յանդգնի խաղալ մի ազգի ճակատագրի հետ, և այսօր հայկական հարցը կը գտնվէր թերևս բոլորովին տարբեր վիճակի մէջ։ Բայց ո՛չ. հայ քրիստոնեայ մարդիկ, բարեմիտ՝ բայց թոյլ, լաւ համարեցին թաղվել իրանց թիկնաթոռների մէջ և լոկ երեմիականներ կարդալ, առանց խորհելու որ այդ կերպ ընթացքը համահաւասար էր իրանց քննադատած անխոհեմ ձեռնարկութիւններին և ազգը տանում էր դէպի կործանում։

Այո, մի արմատական սխալ է այն տարածված կարծիքը, թէ հայ ազգը կը կործանվի իր անմիաբանութեան պատճառով։ Ոչ, նա կը կործանվի նոյնքան և աւելի իր միաբանասիրութեան, իր թուլասիրտ համակերպութեան պատճառով։

Եւ հիմա մենք գտնվում ենք ճիշդ միևնոյն դրութեան մէջ։ Դեռ կան Թիւրքահայում ազատ մնացած հայ ժողովրդի բեկորները, կան գաղթականութիւնները, արտասահմանեան գաղութները, կայ Պարսկաստանի հայութիւնը և վերջապէս կովկասահայութիւնը։ Այս բոլորի ճակատագիրը, ուզենք թէ չուզենք, նորից պիտի վարեն կազմակերպված մարմինները։ Նրանք են, որ պիտի կարողանան իրանց գործունէութեան համար անհրաժեշտ գումարներ հայթայթել, նրանք են, որ ընտրութիւնների մէջ պիտի շահեն և իրանց մարդիկը պիտի դնեն ազգային բոլոր կարևոր գործերի գլուխը։ Նրանք են, որ յարատև և սիստեմատիկ պրօպագանդայով պիտի կարողանան ստեղծել իրանց շուրջը հասարակական ուժեղ հոսանք և տանել այն իրանց ուզած ուղղութեամբ։ Այս բոլորի դէմ ինչ պիտի կարողանան անել բոլոր նրանք, որ համաձայն չեն քարոզված ուղղութեան։ Պիտի կարողանան լոկ երեմիականներով, կծու քննադատութիւններով կամ երկնքից «վսեմ նկարագիրներ» սպասելով յոյս ունենալ, թէ գործերը ինքնին կարգի կընկնեն և էլի նախկին աղէտաբեր սխալները չեն կրկնվի։

Եզրակացութիւնը պարզ է. ոյժին ոյժ պիտի հակադրել։ Կեանքն այդպէս է առաջ գնացել. և մեզ համար չէ, որ նա իր կանոնը պիտի փոխէ։ Անհրաժեշտ է որ բոլոր նրանք, որոնք քննադատում են վերջին քառասնահինգամեակում մեր ազգային կեանքին ուղղութիւն տուող հոսանքը և նրան պատասխանատու են համարում ազգի գլխին պայթած չարիքների համար, թողնեն խօսքերի աշխարհը, միանան, ցաք ու ցրիւ ոյժերը ամփոփեն մի ընդհանուր կազմակերպութեան մէջ և բոլոր օրինաւոր միջոցներով ջանան իրանց ձեռքն առնել ազգային կեանքի ղեկը և ուղղեն այն՝ համաձայն իրանց համոզմունքի։ Առանց քաղաքացիական գիտակցութեան մի այդպիսի արտայայտութեան՝ երբեք մեր ազգային գործերը չը պիտի կարողանան ազատվել ծայրայեղ տարրերի քմահաճ տիրապետութիւնից։

Պարզ է, որ այդ տեսակ մի կազմակերպութիւն պիտի լինի դեմօկրատ-ռամկավարական։ Իբրև բնոյթն իսկ այդպէս է հրամայում։ Նա իրան նպատակ չը պիտի դնի սօցիալական արդի կառուցուածքի փոփոխութիւնը, ինչպէս այդ արել են մեր մէջ գործող մի քանի կուսակցութիւններ, որ յաւակնութիւն են ունեցել և ունեն դեռ՝ հայ ժողովրդի ազգային իրաւունքները ձեռք ձգելուց զատ յեղաշրջել նաև նրա ապրած միջնադարի սօցիալական կարգերը։ Նոր կազմակերպութիւնը պիտի ունենայ դեմօկրատական ուղղութիւն, որովհետև այդ է միակ նպատակայարմար ուղին մեր ազգային հաստատութիւնների լաւագոյն վարչութեան։ Այլապէս պէտք պիտի լինէր ենթարկել նրանց մի որևիցէ դիկտատուրայի, լինի այն կղերական, պահպանողական, ազատական թէ սօցիալիստական։ Իսկ դիկտատուրան, ինչ տեսակի ուզում է թող լինի, անկարող է գոհացում տալու որևէ ժողովրդի բազմատեսակ պահանջներին, և բացի այդ՝ շուտով կենթարկվի լճացման և այլասերման։ Վարչական այդ սիստեմը արդէն շուտով իր վերջին հրաժեշտն է տալու աշխարհին, անգամ մեզնից աւելի յետամնաց ժողովուրդների մէջ։

«Մշակի» առաջարկը մի անյետաձգելի անհրաժեշտութիւն է ներկայացնում։ Կովկասի հայութիւնը երեխայ չէ, որպէսզի իր բաղդի տնօրէնութիւնը թողնի ինքնակոչ խնամակալների և նրանց արած սխալ քայլերի հանդէպ միմիայն ճիչ բարձրացնի և արտասուք թափի։ Թող մեր մէջն էլ կազմվեն կուսակցական մեծ զանգուածներ, պայքարեն իրար հետ օրինաւոր հողի վրա և հաւասարակշռեն կեանքը, ինչպէս արին Անգլիայի երկու հսկայ կուսակցութիւնները։

Ուրիշ ճամբայ չենք նկատում մենք։ Ինչքան էլ դէս ու դէն ընկնենք, ինչքան էլ թուղթ և թանաք սպառի, նորից մեր կեանքին տէր պիտի տան այն ոյժերը, որ անցեալի մէջ դիրքեր են գրաւած և ամրացրած։ Սպասել, որ այդ ոյժերը կրեն խոր, արմատական փոփոխութիւններ և ստանան մեզ նպաստաւոր ուղղութիւն, անմտութիւն է։ Խմբակցութիւնները, ինչպէս անհատները և ազգերը, մէկ վայրկեանի մէջ չեն փոխի իրանց գաղափարները, բայց մանաւանդ իրանց աւանդութիւններն ու բարքերը՝ Պէտք է ունենալ սեփական գործունէութիւն, սեփական մասսա, սեփական գործունէութեան դաշտ։ Եւ այդ կերպով, աւելի շուտ, քան թէ չէզոք անկիւններից բարձրացող քննադատութիւններով կամ միաբանութեան միակերպ, անհետևանք քարոզներով է, որ պիտի իրագործվի ճշմարիտ, արդիւնաւոր համերաշխութիւնը։ Որովհետև միայն ոյժերի մէջ է, որ համերաշխութիւնը գոյանում է և տեւական է դառնում։ Այլապէս բաղդի համերաշխութեան փորձերը կը վիժեն կամ կը դառնան շահագործումի առիթ, ինչպէս տեսանք շատ ու շատ առիթներով մօտիկ անցեալում։

Աթէնքի մեծ օրէնսդիրը—Սօլօն—մի հետաքրքրական օրէնք էր հրատարակել։ Նա մահվան պատիժ էր սպառնում այն ամեն քաղաքացիներին, որոնք հանրային մեծ ու փոքր խնդիրների և վէճերի միջոցին բռնում էին չէզոք, անտարբեր դիրք՝ համարելով այդ կերպ վարմունքը մեծագոյն պատճառ հանրային գործերի յետամնացութեան և անվստահելի ձեռքերի մէջ ընկնելուն։ Այժմ էլ եթէ ոչ մահվան՝ գէթ խորին արհամարհանքի են արժանի այն մարդիկ, որոնք հասարակական չարիքների դէմ կռւելու փոխարէն՝ փակում են իրանց աչքերը նրանց հանդէպ, կամ բաւականանում են միայն քննադատելով։

Ժամանակ է դուրս գալու անվերջ խօսքերի կախարդական շրջագծից։

(«Վան-Տոսպ») Վ. Պապիկեան

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Երէկ, դեկտեմբերի 3-ին տեղի ունեցաւ Սեդրաք Մանդինեանի յուղարկաւորութիւնը և թաղումը։ Առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից տխուր յուղարկաւորութիւնը անցնելով Նիկօլայեվեան կամուրջով՝ ուղղվեց դէպի Վանքի մայր եկեղեցին, ուր պատարագիչ էր Էջմիածնի ճեմարանի վերատեսուչ Գարեգին վարդապետը։ Յուղարկաւորութեան և թաղման հանդէսին մասնակցում էին հայ քահանայութիւնը, հայկական բոլոր դպրոցական, կուլտուրական հիմնարկութիւններն իրանց ներկայացուցիչներով, ամբողջ հայ մամուլը և զանազան պատգամաւորներ։ Ներկայ էին Ներսիսեան դպրոցի ամբողջ հոգաբարձական և ուսուցչական կազմը իրանց աշակերտներով, Գայեանեան, Յովնանեան, Զգրաշէնի, Քամոյեան, Թանդոյեան դպրոցների կազմը, Հայ Ուսուցչական Միութիւնը, Հայոց Դրամատիկական, Հ. Բարեգ. Ընկերութեան, Նպաստամատոյց Ընկերութեան, Հայոց Հրատարակչ. Ընկերութեան ներկայացուցիչները։ Պատարագին երգում էր Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը։ «Հայր մերից» առաջ դամբանական խօսեց պատարագիչ Գարեգին վարդապետը, բնորոշելով հանգուցեալի գործունէութիւնը և վերջում արտայայտելով Էջմիածնի ճեմարանի կողմից սրտագին ցաւակցութիւն։ Պատարագից յետոյ խօսեց նաև առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։ Յուղարկաւորութիւնը Վանքից Պուշկինեան փողոցով գնաց Խօջիվանքի գերեզմանատունը խուռն բազմութեան ուղեկցութեամբ։ Գերեզմանատանը դամբանական խօսեցին Աւ. Եզեկեան և Գ. Եղիկեան։

Դագաղին դրված էին միմիայն թարմ ծաղիկներից մի խաչ ընտանիքից և գամնեայ պսակ՝ ներքևը թարմ վարդերից փարթամ փունջ՝ թաղման կարգադիր յանձնաժողովից։

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

Բագու, 2 դեկտ.

Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը ողբում է Մանդինեանի, ժողովրդական լուսաւորութեան գործի արժանաւոր աշխատաւորի մահը, որ դաստիարակել է ժողովրդական ուսուցիչների մի սերունդ։ Հանգուցեալի պայծառ յիշատակը անմոռաց կը մնայ հայկական դպրոցի պատմութեան մէջ։

Նախագահ բժ. Զաքարեան

(Տ. Նազարեանին)

Ալէքսանդրապօլ, 2 դեկտ.

Խնդրում եմ արտայայտել խորին վշտակցութիւնս, ուսուցչիս, Սեդրաք Մանդինեանի մահվան առիթով, ընտանիքին։

Գրիգոր Տէր-Պօղոսեան

Երէկ Տ. Նազարեանի փախստականների ապաստարանում հոգեհացից յետոյ կատարվեց հոգեհանգիստ Սեդրաք Մանդինեանի յիշատակին։ Հոգեհանգիստը կատարեցին փախստական քահանաները, ներկայ էին և ապաստարանում ճաշող փախստական ուսուցիչներն ու վարժուհիները։

Այսօր, ուրբաթ, Գրական-Գեղագիտական Սալօնի հերթական հանդիսաւոր երեկոյթը նուիրվում է Սեդրաք Մանդինեանի յիշատակին։

Զորեքշաբթի երեկոյեան դեկտ. 2-ին հանգուցեալի բնակարանում կատարված հոգեհանգստին ներկայ էին Մեսրոպ եպիսկոպոսը և Գարեգին վարդապետը։

Սեդրաք Մանդինեանի դագաղի վրա պսակի փոխարէն նրա դուստրը իր ամուսնու՝ բժշ. Հազարապետեանի հետ ուղարկել է Տ. Նազարեանի ճաշարանին 20 ր.։

Հայկ և Մարգարիտ Կանայեանները Սեդրաք Մանդինեանի դագաղին պսակ դնելու փոխարէն ուղարկել են Տ. Նազարեանի ճաշարանին 20 ր.։

Ցաւակցական հեռագիրներ ստացվում են անընդհատ, ընտանիքի, հայ թերթերի, Գրական-Գեղագիտական Սալօնի, թաղման կարգադրիչ յանձնաժողովի հասցէներով։

ԵՐԿՐԱՊԱՀՆԵՐԻՆ ԶԷՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վստահելի աղբիւրներից հաղորդում են, որ 1907—1909 թ. 2-րդ կարգի երկրապահների զինուորակոչութիւնը կայանալու է միայն դեկտեմբերի վերջերին։

Յետաձգումը տեղի է ունեցել այն պատճառով, որովհետև զինւորական վարչութիւնը զբաղված է նախապատրաստական աշխատանքներով, որպէսզի առաջիկայ յունվարին բժշկական քննութեան ենթարկի սպիտակ տոմսեր ունեցողներին (бѣлобилетниковъ)։

ՎՈԼԳԱՅԻ ԱՓԵՐԻՑ

I

Զարմանալի քաղաք է Աստրախանը... ամեն անգամ, երբ գրիչ եմ վերցնում ձեռքս մի որևէ բան գրելու մեր քաղաքից, անպատճառ, կարծես թէ, ուզում եմ ամենից առաջ շեշտել մեր անտարբերութիւնը, մեր անշարժութիւնը և մեր անգործունէութիւնը։

Փոքրիկ գաղութ ենք կազմում, ընդամենը մօտաւորապէս մի հազար տուն, և այդ հազար տուն հայերի մէջ դուք կը գտնէք մեծ, շատ մեծ հարստութիւն, իրանք էլ մեծ մասամբ անժառանգ, և միևնոյն ժամանակ բուն տեղացիները պարզ, ենթարկվող և զգացվող մարդիկ են, ուրեմն, ըստ երևոյթին, այդ փոքրիկ գաղութը պէտք էր ինչպիսի՜ համերաշխ, արդիւնաբեր գործունէութիւն ցոյց տար այդպիսի րոպէներին, բայց... Բայց, զարմանալի բան, գործ չի դուրս գալիս ձեռներից...

Խօսք, անվերջ խօսք, նորանոր առաջարկութիւններ, բարի ցանկութիւններ, վիճաբանութիւններ, ճառախօսութիւններ, բայց մէջը փուչ... գործ չը կայ...

Մեղաւորը մենք ենք. տեղացի ժողովուրդը մեղաւոր չէ. մեր՝ գործի ղեկավարների՝ մէջ է պակասում անկեղծութիւնը, եռանդը, գործունէութիւնը, իսկ դրա տեղ իշխում է ամենի մէջ անձնականը, եսականը, կռիւը, վիճաբանութիւնը, և մեզ նայող խեղճ տեղացի ժողովուրդը շատ անգամ չը գիտէ, թէ ո՛ր կողմը յանգի, որի՛ն լսի, որի՛ ասածը ճշմարտութիւն ընդունի...

Այդպէս եղել է տարիներ առաջ, այդպէս է և այժմ. պատերազմը, այդ ահռելի համաեւրոպական հրդեհը և նրանից առաջացած — մանաւանդ մեր խեղճ ու կրակ ազգի համար — հետևանքները, հայ ազգի ոչնչացման, երկրի երեսից ջնջվելու, սրբվելու ուրուականը, մեր ցաք ու ցրիւ եղած եղբայրների մահացութիւնը, ոչինչ, ոչինչը չի ազդում մեզ վրա... Մենք այդպիսի րոպէներին նոյնիսկ ընդունակ ենք ժամերով, այո, ժամերով վիճել որևէ աննշան սկզբունքային հարցի մասին, մեզ բոլորովին հաշիւ չը տալով որ մեր այդ սկզբունքային հարցի վիճաբանութիւնը հարիւրաւոր մարդկանց զոհեր է նստում մեզ։

Գուցէ ինձ առարկողներ լինեն, որ միևնոյն երևոյթը նկատված է ամեն տեղ, նոյնիսկ մեծ, հայաշատ կենտրօնական քաղաքներում. չեմ վիճում. գուցէ այդպէս է. գուցէ դա զուտ հայկական բնոյթ կարելի է համարել... Բայց և այնպէս կենտրօնական մեծ քաղաքներում դա այնքան աչքի չի ընկնում, վերջապէս այդ քաղաքներում երբ ազգի թշուառութիւնը, իր ամբողջ մերկութեամբ, իրականապէս արդէն գալիս կանգնում է առաջդ, այդտեղ արդէն ուզես-չուզես դու ստիպված ես լինում թողնել վիճաբանութիւնդ, ճառախօսութիւնդ և օգնութեան ձեռք մեկնել առաջդ կանգնած թշուառին...

Մենք զրկված ենք այդ բանից էլ...

Մեզ մօտ, Աստրախանի պէս կտրված վայրում, որտեղ առաջդ կայ միայն մի գրութիւն, մի սրտաճմլիկ հեռագիր, առաջարկութիւն կենտրօնից, մի խօսքով միայն թղթի կտոր, դժուար է սրանով այն աստիճան ցնցել, ինչպէս ցնցում է իրական կեանքը...

Եւ այդ պատճառով էլ մենք աւելի ազատ ենք վիճում, ճառում միանգամայն մոռանալով քաղցածին, մերկին, թշուառին...

Ունենք հայկական կոմիտէտ, որի անդամը լինելու պատիւը ես ինքս ունեմ, և երբ երբեմն ես թերթում եմ այդ կոմիտէտի արձանագրութիւնների մատեանը, ինքս ինձ վրա զարմանում եմ, թէ որքա՛ն առաջարկութիւններ, բարի ցանկութիւններ են արտայայտվել, որքա՛ն սեկցիաներ, մասնաժողովներ են ընտրվել զանազան նպատակներով, բայց... բայց բոլոր ցանկութիւնները [illegible] ցանկութիւնները և մնում [illegible] հնարաւորութեան պահանջների բաւարարութիւն տալով, ուղարկելով դրամ և [illegible]...

Ի՞նչ է սրա պատճառը... Սրա պատճառը մասամբ մեր [illegible] է մայր երկրից, Կովկասից, մեր կտրուածութիւնն է հայ կեանքից, հայ լրագրութիւնից և հայ իրականութիւնից, [illegible] մէջ, որոնցից կազմուած է կոմիտէտը, նոյնիսկ այդպիսի պատմական րոպէներին, երբ մեր լինել չը լինելն է [illegible]...

Մասամբ մեղաւոր են այդ գործում նաև կենտրոնական կոմիտէտները, որոնք [illegible] իրանց [illegible] երբեմն տեղեկութիւններ հաղորդելով իրանց գործունէութեան մասին [illegible] կարիքների մասին և այլն։

Այդպիսի տեղեկութիւնները կարևոր են մեզ պէս կտրուած գաղութների համար, որովհետև այդ տեղեկութիւնների [illegible] հիման վրա մենք [illegible] մարդկանց [illegible] գործին։

Քանի անգամ հարց է բարձրացել Կովկասեան յատուկ մարդ ունենալու մասին Աստրախանում, բայց չի գտնվել [illegible] մարդ, [illegible] հայ [illegible] քին է։

սիրում էր «ողբն ու ատամների կրճտոցը, բռնութիւնն ու հառաչանքները, ուր մարդկանց համար պատրաստված էին անվերջ տանջանքներ, համատարած խաւար, սարսափ, սով, կանչ ու հեծկլտանքներ»... ուր մարդիկ իմանում էին, որ մարդկային կեանքում կայ աւելի սարսափելի բան, քան մահը քան մահվան գաղափարը։

Մեր օրերի մահվան սարսափի և կեանքի տառապանքների հետ Եւրոպան ապրում է և ռազմական արբեցման ճնշիչ մօմենտներ։ Սրանք են եկել կուռի պանեգիրիկներ, ներբողագիրներ, պատերազմի փիլիսոփաներ, ռազմիկ երգիչներ, որոնք ապագայի «գերագոյն իդէալների» իրականացումը տեսնում են հակառակորդի արիւնահեղ կործանման մէջ։ Անյիշելի ժամանակներից սերունդները երգել են իրանց ռազմիկ տենչերը և իրանց մարդկային վայրագ բնազդները պարուրել գեղեցիկ արտայայտութիւնների մէջ։ Այսօր կրկնվում է այդ բոլորը ճիշդ նոյն ձևով, ինչպէս դարեր առաջ երգել է պրօվանսալեան տրուբադուրը իր սերվէնտներից մէկում. «Ես ուրախանում եմ, երբ գարունն է բացվում,— երգում է նա,— երբ տերևներն ու ծաղիկները վերստին են նորոգվում։ Ես ուրախանում եմ, երբ թռչունների երամն է երգում գեղեցիկ անտառում։ Ես ուրախանում եմ, երբ ձին ու ձիաւորը, սպառազինված՝ ոտից մինչ գլուխ, դէպի մարտի դաշտն են սլանում։ Ես ուրախանում եմ, երբ հեծեալ գունդը սրարշաւ անցնում է սարսափի մէջ ձգելով հօտերն ու մարդկանց... երբ պաշարում են ամրոցները, երբ ճնշում ու կործանվում են նրանց պարիսպները, երբ դաշտում տեսնում եմ գերեզմանների երկար շարքերը... Սիրում եմ տեսնել, թէ ինչպէս փշրվում են վահաններն ու նիզակները, սրերն ու սաղաւարտները... ինչպէս այս ու այն կողմ են վազում սպանված ասպետների մոլորված ձիերը։ Սիրում եմ տեսնել, թէ ինչպէս դալար հովիտը ծածկված է ծեր ու ջահել մարտիկների դիակների խիտ-խիտ շարքերով» և այլն և այլն... Չը յիշեցնում սա արդեօք մեր իրականութեան գոնէ աղօտ պատկերացումը։

Խօսելով մարդկանց «հոգեկան արթնացման» մասին, Մեթերլինքը իր «Հեզերի գանձում» Շեքսպիրի արիւնոտ դրամաները մեր ժամանակի համար անհամապատասխան էր համարում, մի տեսակ անախրօնիզմ։ Արդեօք այսպէս է։

. . . .

Ժամանակակիցներիս երևակայութիւնը շանթող այս էպօպէայից մի քանի տարի առաջ Մեթերլինքը այն համոզման է եղել, որ այժմ մարդկանց հոգեկան մթնոլորտը խստ փոխվում է և «մարդկութեանը վիճակված է շուտով լսելու աստուածների շշնջիւնը»։ Ի՜նչ դառն հեգնանք իրականութեան կողմից։

Եւ աստուածների շշնջիւնի փոխարէն մենք լսեցինք լայնաբերան թնդանօթների վայրենի գոռոցը...

Եւ երբ ես պատկերացնում եմ մեր օրերի արիւնն ու աւերը, իմ աչքից չքանում, անյայտանում է Գորկիի «Վեհապանծ» և «միշտ դէպի առաջ և դէպի վեր քայլող Մարդը». չքանում, անյայտանում են Մեթերլինքի «հեզերը», ինքնամփոփ, տխրամած, հոգու ամենահեռաւոր ծալքերում իսկ ինչ-որ [illegible] ողբերգութիւն ապրող հեզերը։ Սակայն երբ տեսնում եմ ես մարդու անկումը, տխուր մտքերը պաշարում են իմ ամբողջ միտքը, մռայլ տրամադրութիւնը համակում է իմ ողջ էութիւնը, և ես ուզում եմ ողբալ միայն մարդու անկումը, նրա այսօրվայ բարբարոսացումը, նրա հոգեկան աշխարհի այս խաւարման ծանր շրջանը։

Եթէ մարդը դեռ երկար ժամանակ ապիկար է լինելու խաղաղ կեանքում և վայրագ՝ փոխադարձ շահերի ընդհարման րոպէին, ապա մարդ անունը կրելը միայն ամօթանք է ու սպանիչ ծաղր...

Սուրխաթեան

Եւ ահա այդ դրութեան մէջ մնում ենք, սպասելով թէ երբ պէտք է կենտրոնից ըստանանք փող ուղող մի հեռագիր, որպէսզի արտայայտենք մեր գործունէութիւնը...

Այս օրերս որբեր պահելու հարցը բարձրացաւ մեր կոմիտէում, բայց սրա մասին հետևեալ անգամ։ Ս. ք. Սալանեանց

Աստրախան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ստացանք «Ջիթենի» ալմանախը, որ հրատարակել են հայ գրողները և գրականագէտները յօգուտ պատերազմից վնասվածների և փախստականների։ Գինն է 2 ր., իսկ ճանապարհածախսով 2 ր. 50 կ.։ Նրա մասին կը խօսենք առանձին։

◆ Թիֆլիսի շրջանի պօստ-հեռագ. կառավարիչը մեզ խնդրում է տպել, որ ներկայ անցքերի պատճառով, նաև կառավարական և առանձին կարևոր հեռագրերի կանոնաւոր առաքման համար, ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեան համաձայն, շնորհաւորական հեռագրներ չեն ընդունվելու դեկտեմբերի 4-ն, 6-ին, 24-ին, 31-ին և 1916 թ. յունվարի 1-ին։

◆ Այսօր կը կայանայ քաղ. տնտեսական յանձնաժողովի նիստը, որտեղ քննվելու են առևտրականների միջնորդութիւնները անհրաժեշտ մթերքները աւելացնելու մասին։

◆ Քաղ. սանիտարական վերատեսուչը կազմել է մի առանձին յանձնաժողով բժիշկներից՝ բոլոր բաղնիքները դիտելու համար։

◆ Վիրաւորների մասի քաղաքային կոմիտէտը կազմել է առանձին յանձնաժողով, որը Հայկ. Կենտ. Կոմիտէտից պէտք է ընդունի վերջնիս՝ Թիֆլիսում բացած հիւանդանոցը փախստականների համար։ Այս հիւանդանոցն անցնելու է Քաղաք. Միութեան կովկասեան ճիւղի կառավարութեանը։

◆ Նոյեմբերի 27-ին կայացաւ քաղ. կենտրոնական կոմիտէտին կից եղած վիրաւորներին ծխախոտ հայթայթող յանձնաժողովի նիստը, որտեղ հաստատվեց ընթացիկ տարվայ դրամական հաշիւը, քննված վերստուգիչ յանձնաժողովի կողմից։ Հաշւից երևաց, որ դրամական մուտք հաշւետուութեան տարում եղել է 18,382 ր. 54 կ., ծախս 12,971 ր. 26 կ.։ Յանձնաժողովը դիրքերը և լազարէթները ուղարկել է 12 միլիօնից աւելի պապիրոս, 64 պուդ ծխախոտ, 950 տուփ լուցկի, թուղթ և այլն։ Յանձնաժողովը Նրևանի ճիւղի նախագահ տ. Խուդաբաշեանից ստացել է 800 ր. «ծխախոտի օրվայ» հանգանակութիւնից, հոկտ. 24-ին և 83 ր. 60 կ. մարկաների վաճառքից։

◆ Պահեստիների ընտանիքներին խնամող քաղաքային կենտրոնական յանձնաժողովը իւրաքանչիւր ամիս յատկացնում է 1500 րուբլի Կովկասեան Կանանց Ընկերութեան բացած երեք ճաշարանին, որոնցից մէկը գտնվում է Հաւլաբարում, միւսը Չէրքէզօվսկայա փողոցի վրա, իսկ երրորդը Արմեանսկի փակուղում։ Այս ճաշարանները բաց են թողնում թէյ, շաքար և հաց՝ պահեստիների 729 ընտանիքներիհամար։

◆ 1916 թ. տեղական ակումբներին կից եղած բուֆետների վրա տուրք է նշանակվում այս կերպ. Թիֆլիսի Ժողովարանի բուֆետի վրա 4,700 ր. (փոխարէն 2400 ր., որ կար 1915 թ.), Նոր ակումբի վրա 6000 ր. (փոխարէն 2400 ր.), Ռուսական ակումբի 5000 ր. (փոխարէն 2400 ր.), Կրուժօկի 2100 ր. (փոխարէն 1500 ր.), Խարփուխի ակումբի 950 ր. (փոխարէն 400 ր.), Հաւլաբարի ակումբի 950 ր. (փոխարէն 800 ր.), Գործակատարների ակումբի 950 ր. (փոխարէն 600 ր.) և Արհեստաւորների ակումբի 950 ր. (փոխարէն 450 ր.)։

◆ Այս երկու օր է «Кав. Сл.» թերթը լոյս չի տեսնում գրաշարների գործադուլի պատճառով։

◆ Ժողովրդական համալսարանների սեկցիաների անդամների ընդհանուր ժողովը, որ նշանակված էր դեկտեմբերի 1-ին, չը կայացաւ և յետաձգվեց մինչև ամսիս 13-ը։

◆ Վագոնների նարեադների համար քաղաքային տան մէջ պէտք է դիմել քաղ. վարչութեան 4-դ բաժանմունքը։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Կարապետ եպ.-ի մահվան առիթով «Пр Край» թերթում մի համակրական յօդուած է տպել պրոֆ. Պ. Վ. Վերխօվսկին։ Նոյն թերթի նոյն համարում (№ 315) հանգուցեալի մասին մի յօդուած է զետեղել և Գէորգ Զուբարը։

◆ «Отк Кавказъ»-ն գրում է, որ Վլադիկավկազի քաղաքագլուխը Փոխարքայի օգնականին է ներկայացրել կովկասեան լեռնանց երկաթուղու (Վլադիկավկազից-Թիֆլիս) վերաբերեալ բոլոր նիւթերը։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Н. В.»-ի վրայից վերցված է նախնական գրաքննութիւնը։

◆ Առաջադիմականների ֆրակցիայի անդամները դուրս են եկել մինիստրներին կից հաստատված առանձին խորհրդակցութիւնների կազմից։

◆ Ալ. Նէյգարդտը մի նամակով հերքում է այն լուրերը, թէ ինքը հրաժարվել է Պետական Խորհրդի աջակողմեան կենտրոնի նախագահի կոչումից և թէ ընդունել է իր կնոջ ազգանունը։

◆ Հաղորդում են, որ Վրաստանի էկզարխ նշանակվել է Վիլնայի արքեպիսկոպոս աջակողմեան Տիխօնը։

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է. «Պետական Խորհրդի ֆինանսական մասնաժողովի մէջ վիճաբանութիւններ առաջ բերեց Խորհրդի աջակողմեանների առաջարկութիւնը՝ ստուգութեան ենթարկելու զեմստվային և քաղաքային միութիւնների հաշիւները։ Կօկօվցեվը առաջարկեց ստուգիչ քննութեան ենթարկել առհասարակ բոլոր այն ծախքերը, որոնք կապված են պատերազմի հետ։ Այդ առաջարկութիւնը քուէարկվեց և ընդունվեց ձայների ճնշող մեծամասնութեամբ»։

◆ Կադէտները բացասաբար են վերաբերում դէպի առաջադիմականների որոշումը, որի համաձայն նրանք դուրս եկան առանձին խորհրդակցութիւնների կազմից։

◆ Մինիստրների խորհրդին առաջարկված է պարզաբանել 72 պատգամաւորների ներկայացրած օրինագծի առիթով, որ առաջարկում է զեմստվօ մտցնել Անդրկովկասում։ Իրանց կարծիքները ներկայացրել են ներքին գործերի և ֆինանսների մինիստրները և պետական վերահսկիչը։ Առաջինը Անդրկովկասում զեմստվօ մտցնելը գտնում է վաղաժամ, մինչ դեռ վերջին երկուսը գտնում են ժամանակին և անհրաժեշտ։ Կովկասի Փոխարքան իր գրութեան մէջ զեմստվօն Կովկասի համար գտնում է հարկ անհրաժեշտ և ասում է, որ նրա բացակայութիւնը արգելք է լինում երկրի տնտեսական կեանքի զարգացմանը։

ՄԱՄՈՒԼ

«Աչըղ-Սօզ» թուրքական լրագիրը Փոխարքայի՝ կովկասեան մամուլի մասին արած յայտարարութեան առիթով, թէ անհանդուրժելի են մի քանի լրագիրների նեղ-ազգայնական ուղղութիւնը, ասում է, որ եթէ մի քանի լրագիրներ էլ խօսում են իրանց ազգային կարիքները և պահանջները բաւարարելու անհրաժեշտութեան մասին, այդ բանը ունի իր զուտ պատմական հիմքը կամ թէ հասարակական բնոյթը։ Լրագիրը կարծում է, որ մամուլի մէջ ընդհանրապէս ազգային խնդիրների քննութեան արգելումը անկարելի է, որովհետև որոշ դէպքերում ազգային խնդիրների լուսաբանութիւնը հանդիսանում է մինչև անգամ ցանկալի, և այդ՝ ոչ միայն այս կամ այն ազգութեան շահերի համար, այլ անգամ ընդհանուր պետական շահերի։

Մամուլի պարտքն է,—ասում է «Աչըղ-Սօզը»,—չը կուեցնել հարևաններին, այլ հաշտեցնել նրանց և բարեկամական կապեր հաստատել նրանց միջև։

Թերթը, յոյս յայտնելով որ Կովկասի ազգութիւնները, որ դարերով ապրել են իրար հարևանութեամբ, միշտ էլ կը մնան բարի դրացիներ, իր յօդուածը վերջացնում է այսպէս.

Պէտք է աշխատել, որպէսզի դարերով տևած համգստութիւնն ու բաղդաւորութիւնը զոհ չը բերվի ազգային անտագօնիզմի կեղծ զգացման ժամանակաւոր թափին։

Այս խօսքերը պէտք է ուղղել իսկապէս «Зак. Рѣчь»-ին և «Սաքարթվելօյին», որոնց «կեղծ զգացման» թմբուկն աւելի ուժեղ է ձայն հանում։

*

Ի դէպ «Սաքարթվելօյի» մասին մի քանի խօսք։ «Սաքարթվելօն» վրաց նեղ ազգայնականների օրգանն է. նա էլ, ինչպէս «Зак. Рѣчь»-ը, առիթը բաց չէ թողնում յարձակվելու հայերի վրա։ Պ. Нарѣ-ի յօդուածի առիթով, որ տպվեց «Кав. Сл.»-ի №№-ում, նորերս «Սաքարթվելօյի» մէջ լոյս տեսաւ մի երկար «Նամակ խմբագրութեան», ստորագրված «մի փոքրիկ խումբ բանւորներ» անունով։ Շատ կասկածելի և զարմանալի է թւում, որ բանւոր մարդիկ այսպիսի կարծիքներ յայտնէին.

Չենք հասկանում, Աստուած վկայ, միթէ այնքան ընկաւ մեր անձնասիրութիւնը և այնքան փախկոտ դարձաւ մեր նոր սոցիալիստացող երիտասարդութիւնը, որ իրանց չեն կարողանում հաշիւ տալ, թէ ինչու նրանք (հայերը) իրաւունք ունեն թուրքերին և պարսիկներին հետապնդելու և պատերազմ յայտարարելու, ոտնատակ տալու մեզ և գլուխներիս նստելու, իսկ մենք իրաւունք պէտք է չունենանք պաշտպանվելու և ձայն հանելու։ Միթէ ինքնապաշտպանութիւնը մեղք է և շովինիստութիւն։

Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացվում, որ հայերը հետապնդել և պատերազմ են յայտարարել թուրքերին ու պարսիկներին, և հիմա էլ յարձակվել են վրացիների վրա, որի պատճառով էլ վրացիների համար «ինքնապաշտպանութեան» կարիք է զգացվում։ Մարդ չի հասկանում՝ այս խօսքերը ծա՞ղր են, թէ ինչ...

Ճիշդ է ասած, թէ ընկած ծառի կացնաւորը շատանում է։

Մեր սև օրը, մեր վիշտը քիչ է, մեր հարևանները, այժմ փոխանակ մխիթարելու մեզ, էլ աւելի են դառնացնում մեր ցաւը։

Թող իրանց մխիթարանքի խօսքերն իրանց մնան, միայն թէ մենք կուզէինք մի բան, որ նրանք հասկանային, որ հայ ժողովուրդը երբէք և բնաւ ոչ մի միտք չունի վրաց ժողովրդի վերաբերմամբ, և որ իրանց՝ վրացիների լրագրական արշաւանքը հայերի դէմ միանգամայն անարդարացի է և անտեղի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

I

Այն քաղաքական տենդը, որ տիրում է այսօր Պարսկաստանում, չափազանց բնորոշ է որպէս անցեալ քաղաքական իրադարձութիւնների հետևանք։ Երկրի դեմօկրատական կուսակցութիւնը այսօր բացէ ի բաց Գերմանիայի սախական ազդեցութեան գիրկն է նետված. թւում է, որ այդ մեզ բոլորովին չը պիտի զարմացնի, բայց զարմանալին դեմօկրատ կուսակցութեան անզիջողութիւնն է պարսկական գործերի մէջ։

Պարսկաստանի պետական կեանքի պատմութիւնը իրազեկ է դարձնում մեզ մի խոշոր մրցման, որ տեղի ունի շահի պալատում եւրոպական խոշոր պետութիւնների կողմից. այդ մրցումն ու կռիւը մի ժամանակ, մինչև 1907 թիւը, Անգլիան էր մղում այնտեղ Ռուսաստանի դէմ. դա պարսկական բռնապետութեան ժամանակն էր. չը կար դեռ մէջլիսը, չը կային և քաղաքային ինքնավարութիւնները Պարսկաստանում. քաղաքական այդ մրցումը տեղի ունէր միայն մինիստրական շրջանում. յաղթող էր հանդիսանում այն մինիստրն ու պալատական խումբը, որի զօրավիգ եւրոպական պետութիւնն էր (Անգլիան կամ Ռուսաստանը) յաղթող հանդիսանում Պարսկաստանի վերաբերմամբ վարած իր քաղաքականութեան մէջ։ Սակայն պարսկական յեղաշրջման հետ քաղաքական մրցման փօկուսներ են դառնում հասարակական պետական նոր կազմակերպութիւններն ու հիմնարկութիւնները. այդ նոր ույժերի նշանակութիւնը Պարսկաստանի քաղաքական կեանքի համար հասկացաւ, ամենից առաջ, Անգլիան. նա, որպէսզի նորից իր ցանցի մէջ առնի հասարակական նոր տարրերին, օգտաշահելու նրանց այդ մրցման մէջ իր քաղաքական նպատակների համար, ինչպէս պարսկական շարժումների առաջին հաւաքումների օրերին Թէհրանում, պարսկական սահմանադրական կարգերի կողմնակից յայտարարեց իրան. առաջին անգամ «սահմանադրութիւն» բառը արտասանեց Թէհրանի անգլիական հիւպատոսը պարսիկների առաջին հաւաքումների ժամանակ։

Բայց շնորհիւ այն համագործակցութեան, որ 1907 թւականից ստեղծվեց Ռուսաստանի և Անգլիայի միջև, երկու պետութիւնների հակամարտութիւնը մեղմացաւ, և նրանք հանդէս էին գալիս Պարսկաստանում որպէս երրորդ համաձայնութեան դաշնակիցներ։

Գերմանիան այդ ժամանակ չէր ծալել իր ձեռքերը և գործում էր լուռ ու գաղտ։ Նա բռնեց Պարսկաստանի ճիշդ այն տեղից, որտեղից որ Անգլիան էր նախագծել իր համար. մեր ձեռքի տակ եղած նիւթերից յայտնվում է, որ Թէհրանի գերմանական հիւպատոսը ոչ միայն իրան սահմանադրական էր յայտարարել պարսկական յեղաշրջման օրերին, այլև անդին քանակութեամբ զէնք էր բաժանում պարսիկ յեղափոխականներին շահի բռնապետական կառավարութիւնը տապալելու համար։ Անշուշտ Գերմանիայի ագենտ հիւպատոսը իր դեմօկրատական սկզբունքների յաղթանակի համար չէր, որ առատութեամբ իր կառավարութեան հաշւին զէնքեր էր ցրում պարսիկ յեղափոխականներին, այլ բարեկամ ու զօրավիգ ձեռնալով դրամով նոր հասարակական էլէմենտներին առաջ իր քաղաքական ծրագիրների իրագործման համար—մրցակից հանդիսանալու պարսկական շուկայում Անգլիայի և Ռուսաստանի դիմաց - ճանապարհ էր հարթում։ Այդ ծրագիրների իրագործումը երազ չէր, այլ մի չափազանց ռէալ խնդիր, մանաւանդ որ Բաղդադի երկաթուղին Գերմանիային պարսկական գործերի մէջ միևնոյն մակարդակի վրա կանգնեցրեց, որի վրա Ռուսաստանն ու Անգլիան էին կանգնած։ 1911 թւին, երբ լրացաւ Ռուսաստանի և Անգլիայի 1907 թւի կնքած դաշնագիրը Պարսկաստանի հետ (որի հիման վրա շահի կառավարութիւնը ոչ մի կօնցէսիա չը պիտի տար առանց երկու պետութիւնների համաձայնութեան՝ միւս պետութիւններին) առաջ մղվեց Բաղդադ-Համադան-Թէհրան գերմանական երկաթուղու գծի պրօեկտը։

Այսպիսով տեսնում ենք, որ գերմանացիների Պարսկաստանում երևան գալը պատահմամբ չէ, և ոչ էլ զարմանալ պէտք է, որ պարսկական պանիսլամիստ կուսակցութիւնը իր դեմօկրատական մասսայով իրան պանգերմանիստ է յայտարարել։ Սակայն Պարսկաստանը, որպէս յետամնաց երկիր, ուր ընդհարվում են մեծ պետութիւնների շուկայական խնդիրները, իր քաղաքական նոր քայլով չի թևակոխում քաղաքական նոր հօրիզոններ, այլ նա որպէս մի մանկիկն իր զսպանակը մի ձեռքից տեղափոխում է մի այլ ձեռքի մէջ։ Եւ սա առաջին անգամը չէ, որ Պարսկաստանը հանդէս է գալիս կօլոնիալ մեծ պատերազմների ժամանակ. մեզ յայտնի է, որ 18-րդ դարի վերջերին, Նապօլէօնեան արշաւանքների օրով, Նապօլէօնի կողմից Պարսկաստան ուղարկվեց գեներալ Գարդանը շահի հետ դաշն կնքելու, որի համաձայն շահը պիտի օգնէր Նապօլէօնին Հնդկաստան արշաւելու համար անգլիացիների դէմ։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ 1828 թւի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Աբաս-Միրզայի բանակը կրթում, ղեկավարում և առաջնորդում էին պատերազմ ռուս բանակների դէմ անգլիական օֆիցէրները. յայտնի է նոյնպէս, որ 1878 թւի ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ Պարսկաստանը իրան կողմնակից յայտարարեց Ռուսաստանին՝ ակնկալելով որոշ վարձատրութիւն, բայց, այդ բոլորից յետոյ, երբ նա մինչև այսօր նոյն կտրած տաշտակն է մնացել, Պարսկաստանի դեմօկրատներին դարձեալ անմատչելի է մնացել անմահ Շէքսպիրի խօսքերի իմաստը, որ ասում է նա Համլէտի բերանով խորամանկ ծերունի Պօլօնիոսի պատմման առիթով—«Երբ կռւում են երկու ուժեղներ, անօգուտ է թոյլի համար նրանց կռւի մէջը խառնվելը»։ Այս ասացուածքի միտքը նրանց համար աւելի նշանակալից է դառնում շնորհիւ մի խոշոր հանգամանքի, որի հետ ամեն մի պարսիկ դեմօկրատ աւելի պիտի ծանօթ լինէր և հաշւի պիտի առնէր նա այդ հանգամանքը իր քաղաքական որևէ քայլը որոշելու դէպքում։ Դա երկու մեծ պետութիւնների՝ Անգլիայի և Ռուսաստանի այն խոշոր շահերն են Պարսկաստանում, որոնց հետ համեմատած Գերմանիայի շահերը աննշմարելի են նոյնիսկ. և պէտք է կարծել, որ երկու մեծ պետութիւնները հեշտութեամբ չեն զիջի Պարսկաստանում իրանց շահերը։ Դրանից յետոյ, մենք կը դառնանք այժմ թւերի լեզուին, պարզ կացուցանելու այդ կարևոր հանգամանքը, որը այնպէս անփութութեամբ աչքաթող են արել պարսիկ դեմօկրատները, ընթանալով քաղաքականութեան մէջ խարխափումների ճամբով. բայց չէ՞ որ քաղաքականութեան մէջ ամենամխիթար վիճակը խարխափողինն է միշտ։

Մոսկվա Ալ. Մել.-Աղաջ.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԻՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—211

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО“
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ

Իւզօվկայի հայոց աղօթատան մար հարկաւոր է փորձառու, աջող ձայնով, երիտասա
ՏԻՐԱՑՈՒ։
Պայմանները՝ 500 ր. ռոճիկ և 5 ր. եակի վարձ։ Դիմել ինձ. Юзовка, (Ек губ.) հայոց քահանային։
Կարապետ ք. Դաւթե
870. 4-

Նպաստամատոյց Ըն
կերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
Линчъ—Арменія շքեղ հր. 2 հատ. զ. 18
1906 և 1909 թ.թ. Գեղունի, շքեղ հրատ. իւրաքանչիւրի գինն է
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ. 1
» Մատնիչ, պատմուածք
Շիրվանզադէ—Ցաւազարը եւ ջնուղի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով)։
» Ժողովածու երկերի I, II, III, և IV հատոր ամեն մինը գինն է 1 ր.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи
Ив. Саркисянъ—Армянск. литература
Վարդան Քամալեան—Հառաչանք (երկրորդ տպագրութիւն)
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտես. քաղաք. փոխ-յարաբերութիւնները
Նապօլեան պատկերներ հատ
Գր. ա.-ք. Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Լեոնէնի բժշկարանից կազմած)։ 1 ր.
Ս. Դանիէլ Բէկ—Կանանց հարցը
Ա. Քիշմիշեան—Վարդավառ, գր. 2 արտատպուածով.
Զարզալ—Զատկական զանգեր
Ս. Աթայեան—Սիրոյ հովիտը
Յիշեալ բոլոր հրատարակութիւններից մեծ պահանջողներին կը լինի զեղչ
Մինչև 1 րուբլի գումարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրա։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомо вованія на случай бѣдствій «НПАСТ ТУЙЦЪ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15-

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՎԱՆ-ՏՈՍՊ“
Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ։
Բաժնեգինը Ռուսաստանում տարեկան 4 ռուբ., կէս տարվան 2 ր. 50 կ., ամսական 4
Արտասահմանում տարեկան 15 ֆր., կէս տարվան 8 ֆր.։ Առանձին համարը արժէ 1
«ՎԱՆ-ՏՈՍՊԻՆ» վերաբերեալ նամակները, հեռագիրները և դրամը պէտք է ուղ միմիայն խմբագրութեանը, հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Головинскій пр. № 41. Ред арм. журнала «ВАН-ТОСП». Արտասահմանից՝ Rédaction du journal «Van-Tosp», Ru
Tiflis, Golovinski pr. № 41.
«Վան-Տոսպը» ունի իր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութեան հետ։
(օ. մ.) 874. 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւնները
1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ . . . . 1 ր.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . .
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօ, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր.
4) ԴԻՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . .
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . .
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . .
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . .
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի .
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . .
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . . 1 ր.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. Խս. Յարութիւնեանի. . . . . .
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Ա. Եզեկեանի.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . . . .
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի .
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԵՄԸ, Բ. Իշխանեանի .
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբինեանցի .
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զթենցի . . . .
Նրանք, որոնց յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փող ռիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վոր պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%. (6) 0—4

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.